

միջև մեծ տարբերություն կայ. Մահմետական տարրն միշտ կը փափագի պետական պաշտօնեայ ըլլալ, Եֆէնտի տիրոջսով փառաւորութիւն, երբէք արուեստի, վաճառականութեան և գիտութեանց հետամուտ չի լինիր. անընդունակութիւնը կը սկսի վարժարանի սեմերուն վրայէն արդէն յայտնի ընել. իսկ բրիտանեայն որու ձեռքն է արդէն վաճառականութիւնը՝ նա կը փայլի իւր արուեստի առաւելութիւններով և գիւտերովը, որու ձեռքը եթէ կապուած չ'ըլլայ, կրնայ խոտանալ փայլուն սպառազայ մը քաղաքակրթութեան :

(Շարունակելի)

ԳԱՅԻՐԷԻ ԳԱԼՍՏԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԸ

Ե Ի

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԱՎԱՐԱՆՈՒԹԻՒՆ

(Շարք նախորդ թիւէն)

Եթէ կայ միութարական կէտ մը, աղջկանց վարժարանի Թարձր կարգին զգալի յառաջդիմութիւնն է ան, որ նշմարուեցաւ այս տարուան հարցաքննութեան առթիւ, Հայերէնի, Այխարհագրութեան, Ազգ. Պատմութեան և Բնագիտութեան, Պատմութեան, Ինչպէս նաև Առտնին տնտեսագիտութեան մէջ: Ինչո՞ւ այս տարբերութիւնը:

Շատ պարզ է պատճառը: Աղջկանց վարժարանին մէջ, ինչպէս որ տեսնուեցաւ, հաւատարմորէն չէ գործադրուած յայտագիրը, որուն գէժ ուսուցչուհին իր անհատական ջանքով մաքառած է. այդ գասերն աւանդուած են խիստ խնամով ու գիտակցութեամբ, հայերէն լեզուով:

Աշակերտուհիներէն ոմանք, իրենց ուղղակի հարցումներուն կը պատասխանէին կատարեալ համալուծով ու գիտակցութեամբ: Ազգ. Պատմութեան հարցաքննութեան ժամանակ, «Նոր Օր» ի մտադրին կողմէն հարցում մ'ուղղուեցաւ բարձր կարգի օրիորդներէն մէկուն, Ռուբինեան հարստութեան կործանման շարժառիթներուն նկատմամբ. նիւթ մը, որ առաջարկուեցաւ գրաւոր ներկայացնել, գաղափար մը կազմուելու համար օրիորդին թէ՛ շարագրութեան և թէ՛ Ազգ. Պատմութեան մէջ ստացած կարողութեան վրայ. ու աշակերտուհին առանձնացած, քննիչներու հսկող աչքերուն տակ, գրեթէ մէկ ժամէն բերաւ ներկայացուց գրութիւն մը, որու մէջ շարագրութեան ու ոճին հետ կը տեսնուէր

պատմական ծանօթութեանց բաւական մեծ կակ պաշար մը: Ու այդ գրութիւնն էր որ երեցաւ «Նոր Օր»-ի սրահներուն մէջ:

Հօս, յարգանք մը Գալստեան վարժարանի անխնայ ուսուցչուհիին, որ յաջողած է իր յամառ ու յարատե գործունէութեամբ, արգիւնաւէտ ընել իր պաշտօնավարութիւնը, պատրաստելով աշակերտուհիներ որ գոնէ սովորած են սիրել իրենց ազգն ու պաշտել մայրենի լեզուն, առանց ատելու օտար լեզուները: Ահա՛ միակ բացառութիւնը:

Մեր նախնիքաց գիտողութիւնները կը հաստատեն թէ՛ ազգային դաստիարակութեան ըստուերն սնդամ չկայ մեր Ազգ. վարժարանի մէջ, որուն հիմնական ողջալի կացութիւնը ծրնունդ է մէկէ աւելի շարժառիթներու, զորս մի առ մի թուելով՝ թերևս խոցոտենք գիւրազգած ու փափուկ սրտեր. սակայն ի՞նչ կրնանք ընել. լռել՝ չ'չլի է յանցաւորները. դատապարտելի՛ է լռութիւնը, երբ խնդիրը կը գառնայ գերակենսական, այն է կրթական հարցի մը բոլորատիքը. եթէ ծածկենք ճշմարտութիւնը, պիտի քաջալերած ըլլանք տարիներու ընթացքով ու անընդհատօրէն գործուած իրարմէ ծանրագոյն ու անհեղեղ սխալներ. պիտի վարձատրած ըլլանք կոյր ագիտութիւնն ու խնկարկու ստրկութիւնը: Ի՞նչ, ա՛յս էր կտակը, ա՛յս էր նպատակը մեր անմահացեալ ու բարեկիշատակ Վասպուրականցիին, որ իր աւելի քան նուիրական կտակով չնորհած է Ազգ. անյատակ Մնտիին անբաւ հարբտութիւնն ու անսպառ աղբիւրներ հասցիլի. երբէ՛ք. ո՛չ երբէք. . . :

Չ'ընկրկի՛նք ուրեմն պարտակատարութեան հանգէպ. թուե՛նք, յանձնե՛նք հանրային դատասանին դաս մը յանցաւորներ, որոնք, ցաւալի՛ խոստովանութիւն, տխուր գերակատարներն և զլած են ու դեռ կ'ըլլան եղբրական արամին, որուն մէջ ազգային դաստիարակութիւնը կը ներկայացուի արտաքուստ Ազգ. վարժարանէն. . . :

Մէկէ աւելի են ըսինք շարժառիթները, բաղմամբ՝ պատասխանատուները:

Փողովուրդը պաշտօնի, անոր շահերը պաշտպանողի համբաւով ճամբայ ելնող, ու անոր անձնասիրութիւնը վերաւորելով ու իրաւունքները կոխտուելով իրենց ճամբորդութիւնն աւարտող, եսամոլ ու անփորձ, արտաքինը նախընտրող, ներքինը խոտող, արժանիքը կոխտող ու կեղծիքը վարձատրող, անցեալէն չ'խրատող

ու ներկան վասնդող, տկարին ուսերը ճնշող ու հզօրին առջև քծնող, երեւոյթէն դատող ու արեւի պէս պայծառ իրականութիւնն ատող Ազգ. վարչութեան Գործադիր մարմինը, ներկայացուցիչը. ահա՛ առաջին և վերջին պատասխանատուն. այն վարչութիւնը, որ, երբեմն, յախուռն արչաւանքով մը, կը սիրէ կոխել անցնիլ եկեղեցական ամենասուրբ կարգ ու կանոնները, որ, կամաւոր տուրխերը, — դարբու դրոյմով նուիրագործուած — կը փորձէ փոխելու պարտաւորից հարկերու. որ, ամուսնութեան տեսչէն բռնուած խեղճ ամուրիներու արամադրութիւնները շահագործելու կ'ենէ, պահանջելով անոնցմէ անվճարիլ գումարներ, իբրև պատկազիլ, հակառակ պարագային, սպառնալով զըրկելու զիրար սիրող ամուսնուն իրենց օրինաւոր կենակցութեանէն. . . : (Հայաստանի մէջ իրազիլ մը միայն գիտենք, մինչդեռ հօս, Եգիպտոսի բազմաբնուէն հողին վրայ, շնորհիւ ստեղծագործ վարչութեան մը, ժամանակէ մ'ի վեր կը լսենք, մկրտագիլ, պատկազիլ, գերեզմանագիլ, արոտագիլ, և ինչ, և ինչ, նորաստեղծ բառեր, հայկաբաններու լուրջ հետաքննութեանց յանձնարարելի):

Ազգային դաստիարակութեան ողին չ'ըմբռնող, նիւթապէս օգտակարն ու պիտանին՝ բարոյականին գերադասող հողաբաժնութիւն մը, ահա՛ երկրորդ պատասխանատուն. պատասխանատուութիւն մը, որմէ լայն բաժին մը պէտք է ունենայ դարձեալ Ազգ. վարչութիւնը. այն վարչութիւնը որ վերջերս ալ Գալստեան վարժարանի նոր հողաբաժնութիւն մը փորձեց կազմել, չ'համարի տարբերու բաղադրութեամբ մը, պաշտօնակից կարգելով գաղափարով, համադրմամբ ու պաշարով իրարմէ մղաններով հեռաւոր անհատներ:

Վերջապէս, մեր մուրակին մակերեսէն վեր, շատ վերերը սաւառնող, երկրէս հեռու և երկնքին մօտ ապրող, Տրտումին ու Տարտամին սփիւռներուն մէջ մտրող, թող ու մենասէր Տնօրէն մը, ահա՛ երրորդ պատասխանատուն. թէ և մեզի ծանօթ են անոր հոգեկան կացութիւնն, պաշտօնի կանչուելուն պարագաներն ու գաղթականի հանգամանքը:

Նուաղ խղճամիտ, իրենց պաշտօնին վստամութեան անգիտակից, իրենց կոչման բարձրութեան վար, շա՛տ վար գտնուող ուսուցչներ, որոնք հաղիւ մէկ երկու բացառութեամբ, աւելի սողուններ են, կազմալուծեալ ուսուցչական մարմին մը, ահա՛ չորրորդ պատասխանատուն:

(Շարունակելի)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՁԿՆՈՐՍ, ԻՆ ԱՌԹԻԻ

«Նոր Օր» ի թերթօնին մէջ երեւցած «Ձկնորսը» նորավէպը վերջացաւ: Այս համառօտ վէպիկն աչքի առաջ ունենալով՝ ծայրէ ծայր ներկայ կը գտնուինք թըշուառութեան, քանդուածի և աւերուածի տեսարաններուն, զինեմարութեան աղետաբեր հետեւանք ու շար ընկերներու. կենակցութեան արգիւնք: Կը տեսնենք ընտանիք մը, որ, իր կազմութեան առաջին տարիները գոհ, անխառն ուրախութեան մէջ, երջանկութեան ու անմեղութեան խաղաղիկ բոյն մը, կ'սկսի տակաւ ու քայլ առ քայլ դիմել գէպ 'ի թշուառութիւն. կը մթազնի հորիզոնը, կը իսաւարի արեւը. կը բացուի անգունդը, կորուստի ու մահուան անուշիկ վիճը, ուր թաւալուոր կը նետուի ընտանիքն ամբողջ. մատղաշ մանկիկ մ'է որ ցարսին, բուրին գէմ կը գողգողայ և. . . կը մնան. իին մը, անմեղութեան մայր մը, որ զինեմարութեան ու յոռի սովորութեան գերի զարձած էրկան մը ձեռքը կը տանջուի, ընտանիքի հայր մ'է, որ արհեստակիցներու ազդեցութեան տակ սպիւղով, միշտ անոնց հետ շփուելով, թէ և 'ի բնէ բարի խառնուածքով մը, կը գառնայ

գազան մը, որդիսպան հրէշ մը, ընտանիքի պատուհա՛ս մը. . . :

Կը տեսնենք անխնայ արհեստակիցներ, որ խեղճուկի մը, գտնուելի չափ միամիտ Գառնիկի կիրքը կը զըրգան, կը կատակին, կը ծաղրեն, իբրև թող և անձաւրկ երկի մը, վախկոտ հայր մը կ'որակեն, մինչև որ կը մղեն զանի վճռական քայլին, ու անի օղի շոգիով ամպոտած հրացայտ նայուածներու սլաքներ ու կատուած շիկերէի մը ջլապիւնը թաթերու տարախներ կը տեղայ գետաթի հրեշտակներու զլուռն, ու կը հալածէ զանոնք տարտամին և անձանօթին անկիւնները, ու յետո՛յ, կորիւնները կորսնցնող առիւծի մը պէս ասոնց հետքերը կը փնտռէ. . . :

Ասոնք ամենքն ալ կենդանութիւնը կը պահեն պատմուած բարոյական վէպիկին, ու ատելութեան զգացումները կը վառեն ընթերցողներու սրտերուն մէջ գէպ 'ի գինեմարութեան գերիներն ու անոնց շարժառիթները, գէպ 'ի կեանքի ճակատագրային զըծբաղդութիւններն ու ընկերային անխառնութիւնները, գէպ 'ի ամեն սպասմանցիցող բան որ ամեն օր կը կրկնուի ընկերութեան ամեն գասակարգերու յարաբերութեանց մէջ. . . :

Արգահատանք մը կ'զգաս տարաբաղդ կնոջը վրայ, որ սովորուած է ամեն գիշեր հակելու, անօթի զաւակներուն հետ սպասելու. որ գայ անոնց հայրը, ձկնորսը, զինեմար որ նոյն պահուն կինեման մէջ, ազտոտ սեզանի մը շուրջը շարուած անարարական ընկերներու

մէջ, ապրելու ամենաստոր եղանակովը կը սպտէ իր ընտանիքին ապրուստի աղբիւրները, կը պատրաստէ մօտալուռ քանդուած, իր հիննած ու կատուցած ընտանեկան շէնքին:

Ինչ մ'անդին կը տեսնես անտարբեր ու անհոգ մարդկութիւնը, կղերն ու աշխարհականը, գիտունն ու ռամիկը հօս են, ամենքն ալ իրենց եւր մտածող, իրենց փոր պարարող կեղծաւորներու շղթայ մը, իրարու ազուցած մտլութիւններու օգակներով. հօս կը տեսնես սիրող կանխակալ կարծիքներու և ընդհանրացած բարքերու կուտակումը:

Վերջապէս, ինչ որ ամեն օր տեղի կուենայ հասարակութեան մոռցուած խաւերուն մէջ, անբարոյական ու եղբրական, այն է որ ՁԿՆՈՐՍ յարգելի հեղինակը ջանացած է հրապարակելու, ինչ մ'ալ փորձելով զըծելու մասնակի եթէ ոչ հիմնական գործանքներ: Նորավէպին համար այսքան:

Իսկ հեղինակը. — Տիար Աւետիս Պալեան, Արդէնոսի ստորան երկարող նախաքրիստոսեան Մաժակի հաւաքատ ծնունդ, իրաւունք ունի պարծենալու թաղաքային ըլլալուն համար կենսաբոյն, որ, շատ մը հանձարիկ գաւազներ, Հայութեան գիտական, արհեստական ու առեւտրական փառքն աւելցնող բարձր մտքեր արտադրած ու ընծայած է Հայութեան մ'եր հեղինակը սակայն հազուադիտներէն մին պիտի կրնայ ըսուել իր հայրենակիցներէն, որ փափաքած ըլլայ նուիրուելու հայ գրականութեան. ճիւղ, որ ամենէն իշտուն է և սպերախաւը, և աստիճան մը կը հակառէ Ալկոնսի հեղինակին

ԽՈՐՀՈՂԻՆ ՍՈՐՍՈՔԸ

Յափըշտակուած յերազանքի մէջ թեւերուն, Երբ տարտամ են մեր խորհուրդներ եւ երեքուն, Տեսայ մայրեր որ, խոր քրնոյ մէջ ընկերդամ, Դասչի մը մէջ կաթ կուտային իրենց մանկանց...

Ա՛հ, ձեր վրայ խորհելով է, հէ՛ք եղբայրներ, Որ այս անուրջն յերազանքի մէջ ընկերդամ, Լըցում արգոյ ձեր սրտատու զրնատու թեան, Ո՛վ գիւցաղներ պարտեալ թաղուած ի մըթութեան...

Յ. Ս.

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ՕՐ ի Վարչութիւնը պաշտօնապէս կը յայտարարէ որ թերթին քաղաքական պատասխանատու կարգած է ՆՈՐ ՕՐ ի խմբագրապետը Տիար Սմբատ Բիւրատ, քաղաքական Տնօրէն (Directeur politique) անունով:

Հետեւեալը, ամեն գրութեանց, ազգային թէ՛ քաղաքական, խմբագրապետն է պատասխանատու հանդէպ ձեռնհաս իշխանութեան:

Ճնշաւազարին պահանջն ու իր իսկ բնազդը կեստարացիք ընդհանրապէս ծանօթ են հրապարակի վրայ իրիւս գործի մարդիկ իրեւ գրական միտք ու իբրեւ կենսի պայքարին մէջէն յաղթանակով գոլու երկոյ տակուն ու քաջարի մարտիկներ: Հօս, ախմայ յիշողութիւն մը...

Ձկնուրի յարգելի հեղինակը, եթէ չենք սխալիր, վերջին տարիներս մտած է գրականութեան ասպարէզը, սալով առաջին անգամ Մարիլիս նորալէպը, Տիար Ս. Դարբինեանի տպարանէն ի լոյս ընծայուած: Սոյն նորալէպը սրտաշարժ պատմութիւնն է տարարազը հեղինակին մտողը գտորիկին, զոր հօս, գաղթականութեան մէջ, յանձնեց վարատնեան հոգին: Յետոյ ծանօթացաւ ընթերցող հասարակութեան կարգ մը յօդուածներով ու նորալէպներով, «Փիւնիկի» եւ երբեմն ալ «Արշալոյս» մէջ, ընդհանրապէս հանրային ու բարոյական խնդիրներու շուրջը պարտելով:

Այս նոր գէտը կրօնածէսէ բուսական կարեւոր տեղ մը գրուելու հայ գրականութեան մշակներու շարքին մէջ, իբրեւ բարոյախօս ու կրօնաբան գրող մը: Իր գառու մեներն ու գազափարնեքը, յաճախ պաշարուած կանխակալ կարծիքներէ ու քրիստոնէութեան խորհրդաւորութիւնէն, առողջ են բաւական: Հին գրողի ջերմեանը աչակերտ, իր գրուածները կը կրեն գառականութեան գրողը, հակառակ վիպական գոյացի վարպետներուն գործերուն, որոնց ընթերցումով կը պարա-

Որբերու հոգատար եւ Վասպուրականի Որբարինամ ընկերութեանց Միացեալ Գործ. Ժողովներու կողմէն վարչութեան գրկուած է հետեւեալն ի հրատարակութիւն:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Վասպուրականի Որբարինամ եւ Արարիկի Որբերու Հոգատար ընկերութեանց հանրային ձեռնարկներու մէջ միացեալ Գործարքի Ժողովներն պատիւ ունին ծանուցանելու պատ. Հասարակութեան թէ տեղւոյս ազգային Առաջնորդարանի արտօնութեամբ ի նպատակինց եւ Պոլսոյ ազգ. Պատրիարքարանի Որբերու Անտուկին Վաղմակերպուած վիճակահանութեան 3000 տոմսերն ամբողջովին սպառած ըլլալով, վիճակահանութեանը տեղի պիտի ունենայ որոշեալ օրն, այնէ առաջիկայ կիրակի 5 Օգոստոս Ն. Տ. ազգային Մանկապարտէզի Սըրահին մէջ, Ս Եկեղեցւոյ առաւօտեան ժամերը թեմէն անմիջապէս յետոյ, ընդ հսկողութեամբ Առաջնորդարանի ներկայացուցչին:

Փափաքողներն եւս ազատ են ներկայ գտնուելու:

Տեղւոյս Հայկ. Եւնաս. Ընկ. Ընդհ. Ժողովոյ Պատկ. Դիւանը կը յայտարարէ որ յատկապէս օգոստոս 5, կիրակի առաւօտ ժամը 9ին Եւրա Ապտիւ Աղիզի Գ.Ա.ՅԻ Ա.ՅԻՐԻՒԻ մէջ տեղի պիտի ունենայ տարեկան Ընդհ. Ժողովոյ գումարումը, հաշուեկշիռ քննութեան եւ ներքին գործերու մասին խորհրդակցութեանց համար: Այն ընկերները, որ չ'են կարող ներկայ գտնուել, կրնան իրենց փոխանորդ մը կարգել, Ընդհ. Ժողովոյ գումարումէն առաջ գրաւոր գիտումով մ'առ Դիւանն Ընդհ. Ժողովոյ:

Հետեւեալը նոյն օրուան նստէն բացակայ կողմերը պարտին յարգել ներկայից որոշումները, նաեւ նոյն օրուան Ընդհ. Ժողովէն գործաւուն գիտողութիւնք անդեպի են:

ՅԱԼԱՒՈՅ ԹԱԳԱՒՈՐԸ. — Վաղեմի գերասանտպետին վերջերս հանդիպած ձախորդութիւններն յիշեցրան իրա մեծ վիշտ կ'առթին բոլոր թատերասէր ազգայիններուն, որոնք նախանձախնդիր են ազգային պատուին: Կր լուսնի թէ այդ ձախորդածներ առաջ եկած են սրտօնազրի ստօղանն յապաղումէն, հակառակ գերմարդոյն ջանքերուն, զորս թախած է Հայ թատերի յարգելի նաճապետը, յաջողեցնելու համար Արշակ Բ. ի ներկայացումը, որ անհրաժեշտօրէն տեղի պիտի ունենայ, բաւական է որ մեր աչնիւ գրայինները, Աղեքսանդրեցի թատերասէրք, յիշ մ'աւելի ձեռնառու եւ աջակից գտնուին:

Հ Ե Ռ Ա Պ Ի Ր Ն Ե Ր

ԻՏԱԼԻՈՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՄԱՀԸ

ՀՈՒՄ 30 Յուլիս. — Ումպէրթօ թագաւորը սպաննուեցաւ Մօնձա, երէկ իրիկուն ժամը 10ին:

ՄՕՆՁԱ 30 Յուլիս. . . Նոյնը. — Մարգասպանը Անձէյօ Պրէսի պատճառով թագաւորին վրայ շրջանաբերեք հարուած. թագաւորը մտաւ:

պի: Փանոսեանի աչակերտ, չը կրեր սակայն անոր ուղին, ո՛չ ալ անոր նկարագրի ու ժգնութիւնն ու գաղափարներուն ծայրահեղութիւնը, միջակէն անդին չանցնիր. չափաւոր է իր յղացումներուն մէջ եւ բարեխառն ոճ մ'ունի. բնութեան վտեմ ու հրաշապեղ տեսարաններէն չը յափշտակուելի. նիւթին, միշտ նիւթին վարած, բարոյականի բարձրագոյն սկզբունքները նիւթին հետ հաշտեցնելու ճիգ մ'ունի. զեռ իրեն համար որոշած չէ ուղի մը. մարդիկ սովոր է դատելու իրենց երեւոյթէն. ներքին մարդը թափանցելու համար զեռ շատ պէտք ունի ապրելու ընկերային խաւերու մէջ. հետի, միշտ հետի, կղզիացեալ էութիւն մը կը վարէ, շատ քիչ անգամ մտնոյնով ամբարխի, որուն խլրտու մեներէն ու ալ մուկներէն կը վախնայ. կը վարուի քան թէ կը վարի. հետեւող է քան թէ կարապետող:

Իր մտածումները նորութիւն մը չեն բերեր. սկար, շատ տկար է իր արտայայտութեանց մէջ: Արդար ըլլաւու համար, պէտք է ըսել թէ՛ «Ձկնուր» հեղինակը անհերքելի կը խօսի ու խօսի: Կը գրէ, բառեր գրարար, շարարութիւնը օսմիկներն մօտեցող աշխարհաբար մը: Սակայն, եթէ գոյն ճիգ մ'ունի թօթուելու, վրայէն նետելու հին վերարկուն, քիչ մ'աւելի բարեփոխել իր գրական աշխատութեան կողմակը, քիչ ատենէն բարեբաղդութիւնը պիտի ունենանք ողջունելու յանձին Տիար Ա. Պալեանի լաւ գրող մը. պիտի կարգանք աւելի համեղ, աւելի յանկուցիչ եւ աւելի խնամալ հայերէնով նորալէպներ:

ՄՕՆՁԱ 30 Յուլիս. — Ռուպէրթ Թագաւորը սպաննուեցաւ այն պահուն որ կառքը կը նստէր, ըմբիշներու մրցումին մրցանակաբաշխումէն երկնէ վերջ. մարգասպանին անունն է Պրէսի, շրջանաբերեք հարուած պարպեց. գնդակներէն մինն Ն. Վեհապատութեան սրտին հանդիպեցաւ, թագաւորը քանի մը վայրկեանէն մտաւ, Պրէսի ձերբակալուեցաւ:

ՀՈՒՄ 30 Յուլիս. — Կը կարծուի թէ՛ Ումպէրթօյ սպաննումը արդիւնք է անիշխանական գաւաղութեան մը, որ կ'ապանայ եւրոպական չորս վեհապետներու: Ումպէրթօ թագաւորին կանխաւ ազգաբարուած էր, բայց ինք չէր ուզած աւելցնել իր թիկնապահներուն թիւը:

ՊԵՐՄԻՆ 30 Յուլիս. — Գերմանական զօրքերը Չինաստան գրկուելու առթիւ վիճէ՞մ կայսրը, ուրախօրք իր հրաժեշտի ողջոյնները տալու միջոցին, անոնց պատուիրած է ողջ չ'իթողու գերիները: Այս լուրը, գերմանական թերթերը հրատարակած են ու մեծ յուզում կը տիրէ ամբողջ կայսրութեան մէջ կայսեր սոյն նուազ քրիստոնէական խորհուրդին համար: Կ'ըսուի թէ Պուլով ջանացած է ջնջել այդ հատուածը, բայց յրապիր մը զայն արգէն հրատարակած է եղեր:

ԲԱՐՍԻԶ, 29 Յուլիս. — Լոնտոնի եւ Ս. Բէթթրսպուրկի դահլիճները՝ Չինական աղբիւրք գեսպաններուն մասին արուած ասպանութիւններու ճշգրտեանը կը տարակուսին:

ԼՈՆՏՐԱ, 29 Յուլիս. — Յրէնչ գործաւորը գրաւեց Միտալպուրկը:

ԲԱՐՍԻԶ 30 Յուլիս. — Բէթինի գերմանական գեսպանատան քարտուղարը 21 Յուլիսի թուով կը գրէ թէ Չինացիք գաղբեցուցին յարձակումը:

Իրինսլով հրամանատարն ու 5000 Օրէնձիներ անձնատուր եղան Բէթլէ՛էմի մտերը:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԻՏԱԼԻՈՅ ԹԱԳԱՒՈՐԸ, ՈՒՄՊԵՐԹՕ Ա. սպաննուեցաւ. անոր հարցոյցը եւ գաւառի թուր մրանասական ու Աւստրիական գրօններէն յետոյ իտալականն է անոն որ սուգի քողով կը ծածկուի Գազերիո՛ Վարնոյի աղիները գործա թափեց. Լիւեմի՛ էլիզապէթ կայսրուհին սիրար միեջ մանաբեր գաւառը. Պրէսի՛ սպաննեց իտալիոյ թագաւորը, ստանց աւանդական գաւառի հարուածին, շրջանաբեր միայն գործածելով:

Ումպէրթօ թագաւորն ըստ սովորութեան ամառնային եղա՛ւակը կ'անցնէր Մօնձա, ներկայ գտնուած էր մարմնամարզական հանգիսի մը ու կը վերադառնար իր տեղը: Արքայասպանը նեղութիւն չը կրեց մտնոյնով վեհապետին, թեւն երկարեց ու պարպեց. հարց. իրիկուան ժամը 9 էր. թագաւորը մտաւ ժամը 10 ին:

Պետք է յիշել թէ՛ քանի մ'ամիս կայ Յուցաննուրի բացումէն քիչ առաջ, բայն ու կրկնեցին թէ՛ Անիշխանականը զինաթափ եղած չ'են ու կողմակերպած են մեծ դաւաղութիւն մը եւրոպայի բոլոր վեհապետներուն գէմ:

Այնուհետեւ կարգացինք ոճի մը փորձը կայլէսի Իշխանին գէմ, ուրիշ կարծեցեալ փորձ մ'ալ Չարին գէմ. նոյն իսկ հօս չորս շաբաթ կայ, իտալական գաղթականութեան մէջ զրոյց պարտեցաւ թէ՛ ոճագործութեան փորձ մ'եղած էր իտալիոյ թագաւորին գէմ:

Յայտնի բան է որ դաւաղութիւնը կար ու զեռ կայ. եւ հիմակուանը մին է լոկ այս եղբրական ցոյցերէն:

Յաւէտ ողբացուալ ու ամենուն սիրեցեալ թագաւորին կենսագրական գիծերն ու սպանման մանրամասնութիւնները յաջորդ թուով:

Կը յուսանք թէ մեր ըրած խոնարհ գիտողութիւնները, բացարձակօրէն գրական ասմանին մէջ սեղմուած, ոչ՛ միայն չ'պիտի վառուցեն «Նոր Օր» յարգելի աշխատակիցը, այլ նաեւ աւելի մեծ զարկ մը պիտի տան անոր գէպ ի կատարելագործում նկրտելու, եւ, ինքզինք բազմապատկելու թէ՛ գրական կարեւոր սեռերը մշակելով եւ թէ՛ ընկերային կեանքի մթին խաւերը թափանցելով:

Ամփոփելով մեր տեսութիւնները, ուրախ ենք աւելուելու որ Եփեղաօսացոյց մէջ, մամոյն աղատութեան ասպարիս տակ, ժողովրդին գէպ ի լաւագոյն ձգտումներն ու բարի տրամադրութիւնները հետզհետէ պիտի ծաւալ գտնեն:

Ու ՆՈՐ ՕՐ, իր կոչման հաւատարիմ, պիտի բանայ իր էջերը բոլոր հայ գրողներուն առջեւ, որոնք ժողովրդի գերագոյն շահերէն առաջնորդուած, մարտը մը տածումներով, անկախ դատումներով, աչնիւ զգացումներով զինուած, կը փափաքին նուիրուել հանրութեան ու սատարել անոր բարոյական ու մտաւորական զարգացման:

Ս. ԲԻՒՐԱՏ

ՊԱՅՏՕՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ

ԳՈՐԾ, ԺՈՂՈՎՈՑ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՏԱՆ

Ընկերութեան Ա. տարեշրջանը լրանալու մօտ է, եւ միամիայ հաշուեկէշուն ու տեղեկագիրք պիտի պատրաստուի, ներկայուելու համար յառաջիկայ Ընդհ. Ժողովոյ տարեկան զուգարման, որ տեղի պիտի ունենայ Ազգ. Մանկավարժացի Սրահը, Օգոստոս 26 ին կիրակի օրը ։ Եւ որովհետեւ միամիայ հաշուեկէշուն մը պէտք է պարունակէ ամբողջ մէկ տարուան գործածութիւնները, հարկ անհրաժեշտ է որ հաշիւները վախու ին մինչեւ Օգոստոս 1. թուական հիմնարկութեան Լսարան-Ընթերցատուն ընկերութեան ։

Հետեւաբար Գործ. Ժողովն պարտք կ'զգայ պատճառաւոր հրատարակութեան տալ ընկերութեան հիմնական կանոնագրին 7րդ եւ ներքին կանոնագրին 14րդ յօդուածները ։

Հիմնական կանոն. Յօդ. 7. — Այն անդամն որ երեք ամիս շարունակ անվեր կը բողոքուի բաժնետիրութեան պարտքի, Գործ. Ժողովոյ կողմէն կ'ենթարկուի ներքին կանոնագրի 14րդ յօդուածին ճշմարտութեանը ։

Ներքին կանոն. Յօդ. 14. — Գործ. Ժողովոյ վերջին պատճառաւոր արգարտութեան յետոյ զարգեալ իր պարտքը չ'վճարող անդամը կը զբաղուի Ընդհ. Ժողովոյ անդամացուցութեան ։

Հիմնական Ընկերութեան Ընդհ. Ժողովոյ բացարձակ հաւանութեամբ վաւերացեալ հիմնական եւ ներքին կանոնագրի ներքին վերաշինեալ 2 յօդուածներուն որոշոյն վրայ, սոյն վերջին պատճառաւոր արգարտութեամբ կը հրաւիրենք ուշադրութիւնը բոլոր այն Պատ. ընկերներուն որոնք իրենց պարտքը ցարդ թիրաղմար թողած են կամ բնաւ չ'են վճարած ։ Առ այս Գործադիր Ժողովն պայմանաւոր որոշած է մինչեւ յառաջիկայ Օգոստոս 12 ։ Մինչեւ այդ որոշեալ թուականը կը խնդրուի Պատ. անդամներէն որ հաճին ամբողջացնել իրենց վճարումները, գիւմարտ ՆՈՐ ՕՐ ի խմբագրատունը որ է Ընկերութեան կեդրոնատեղին, Պազար Մուրուրի մէջ, թիւ 38 գրասենեակը, հակառակ պարագային, Գործ. Ժողովոյ կողմանէ անդամակցութեան վրայ անհրաժեշտ կը յայտարարուին անո՞ք, ըլլա՞ն սոյն իսկ Մայր Դիւանի կամ Գործ. Ժողովոյ անդամներ ։

Բարիք, 23 Յուլիս 1900

ՄԵՐ ԱՅԻՆ Ք

Յուլիս ամիսը քննութիւններու ժամանակն է ։ Այս սօր մենք պիտի խօսինք մեր հայրենակիցներէն միոյն յաջող քննութեան մասին ։

Անցեալ երեքշաբթի օր իւր անդամներու թեզը անցուց մեր երիտասարդ հայրենակիցներէն Կ. Պոլսեցի Ռուբէն Յակոբեան Շատ սիրուն եւ վաղեմի երիտասարդ մ'է Բարիքի համալսարանի ուսանողներուն մէջ, որ երբ իրենց թեզը անցնելու մօտ լինին, իրենց բարեկամներուն եւ ծանօթներուն լուր կուտան թէ այս ինչ օրը՝ այս ինչ ժամուն պիտի պաշտպանեն իրենց թեզը ։ Բարեկամներն ու ծանօթները, հայրենակիցները, խմբովին կըրթան համալսարան եւ հոն կը գտնեն իրենց ընկերն զօգրուի շտեմը հազած եւ արդէն քանի մը ընկերներով շրջապատուած ։ Անցեալ երեքշաբթի (Յուլիս 17) ժամը 1ին բազմաթիւ հայ ուսանողներ, բժիշկներ եւ այլ երիտասարդներ խնուած էին բժշկական համալսարանին ընդարձակ սրահներէն միոյն մէջ, վասն զի այդ օրը եւ այդ ժամուն Գ. Ռուբէն Յակոբեան իւր թէզը կ'անցընէր որուն նիւթ ընտրած էր «թթուածնի գործածութիւնը միզային հիւանդութեանց մէջ» de l'emploi de l'oxygène dans les infections urinaires) Գրեթէ կէս ժամու չափ Գէնյի (Quenu), Ալպերան (Alberran) եւ Պէրթէ (Berger) բժիշկները քննադատեցին մեր հայրենակցին թեզը եւ զինքը բաւական չարչարեցին, առարկութիւններով, հարցումներով եւ հազար ու մէկ զմուտութիւններ հանելով երիտասարդ բժշկին գրուածքին զէմ, ուրախալի էր տեսնել թէ ինչպէս հայ թեկնածուն ամէնուն ստարկութեանց կը պատասխանէր ։

Վերջապէս ծերունի նախագար՝ բժշկապետ-բրոֆէսէօր Կիւլեօնը (Guyon) խօսք առաւ եւ գովեց Պ. Ռուբէն Յակոբեանի թէզը եւ նկատը վերջացու. վայրկեան մը առաջուան պարզ Ռուբէն Յակոբեանը այժմ Տօգդէօն Ռուբէն Յակոբեան եղաւ « bien satisfait » (չատ զո՞ն) նօթով ։

Տօքթ. Ռ. Յակոբեանը որոշեալ ժամանակամիջոցին (օրինական 5 տարի) աւարտեց իւր բժշկական ուսմունքը գոհացուցիչ կերպով, Տօքթ. Ռ. Յակոբեան Բա-

րիքի գաղթականութեան յաջողակ բժիշկներէն մին պիտի լինի, արդէն իւր թէզը չ'անցուցած Բարիքի նշանաւոր էլիմիքի մը բժիշկը նշանակուած է ։

Յաջողութիւն մեր երիտասարդ Տօքթ. Ռուբէն ։

Ռուբէնութեամբ կ'աւետենք թէ Բարիքի սակաւաթիւ նկարչութեան ուսանողներէն, Կ. Պոլսեցի Պր. Արմենակ Ֆրանսուզեան, որ զեղարուեստից վարժարանին յաջողակ աշակերտներէն մին է, ժամանակէ մը ի վեր երգեցողութեան դասեր ալ անսկալ կարողացեր է քանի մը շարքներէ հետէ Բարիքի Ռենեսանս (Renaissance) թատրոնի երգեցիկ խմբին մէջ մասնէ, Պր. Ա. Ֆրանսուզեան շատ զեղեցիկ ձայն մը ունի. իւր Ռենէսանս մասնը — որ Բարիքի բազմապարզ թատրոններէն մին եւ արդիւնք մը համար այնտեղ մասնը շատ զգուշար — պատիւ կը բերէ թէ՛ Հայ նկարչին եւ թէ՛ Հայ երգչին ։

Արդէն մենք գրելու ատիկը ունեցած ենք Մշեցի Պր. Տիգրան Գիւնարեանի մասին, երբ նա գրեթէ մէկ տարի առաջ Ecole des Ponts et Chaussées գոնէր իրեն առջեւ բաժնայ տուաւ իւր յարատեւ աշխատութեամբ ։ Այս ամառ սկիզբները այս երիտասարդն իւր առաջին տարուան քննութիւններն շատ մի՞ յաջողութեամբ անցուց եւ միջակէն շատ բարձր նօթեր առաւ ։ Ռուբիսայի մեր գիւտար երիտասարդ հայրենակցին յաջողութիւնները, մանաւանդ երբ այդ երիտասարդը նիւթական անձուկ գրութեան մէջ կը գտնուի ։

A. Saissy և Ս. Մ. ԴԱԻԻԺ-ԲԷԿ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

ՏԻԳՐԱՆ Ն. Թ. ՍԱԻԱԼԱՆ

ԿԵՆՍՍՊՐԱԿԱՆ ՅՈՒՇԵՐ

Ս. Դարբինեան ապարանէն մաքուր տպագրութեամբ եւ հեղինակին վիճակի պատկերով զարգարուած ի լոյս կ'ընկու մօտ է հարիւրէ աւելի էջերէ բազմաթիւ սոյն կենսագրական երկն որ իւր շահեկան պարունակութեամբ արժանի է ամեն կարգի ազգայնոց ընթերցման ։ Ինքնակենսագրին, Չիլիեանոյ հին ծանօթ գրական զէմբերէն մին, իր Երուսաղէմ, Աղեքսանդրիա, Իզմիր եւ Էստէմիլ վարած ուսուցչական եւ այլ կարեւոր պաշտօններու բերմամբ՝ ազգային եւ օտարազգի եկեղեցական եւ աշխարհական նշանաւոր անձնաւորութեանց հետ ունեցած է գրուած եւ մտերմական յարաբերութիւններ, զորս գիացած է ճարտար եղանակաւ մը խառնել իր կենսագրական յուշերուն, այնպէս որ ամբողջ գործն մէկ շունչով կարելի է կարգաւ անձանձրոյթ եւ լարուած հետաքրքրութեամբ ։

Որովհետեւ սակաւաթիւ օրինակներ միայն տպուած են սոյն կենսագրական երկէ, փախազողը կրնան այժմէն ընել իրենց յանձնարարութիւնն՝ գիւմարտ

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ ՏՊԱՐԱՆԸ

Ի Պազար Մուրուր Թիւ 27

Գին 5 ԴԱԶ. ՈՂՂ

ԿԵՐՈՆԱԿԱՆ-ԿՐԹԱՐԱՆ ԳԱՅԻՐԵԻ

Հաստատուել 1 յունիւար 1897

Հիմնադիր-Տեղաւոր

Ս. ԲԻՆՐԱՍ

Սոյն հաստատութիւնը փոխադրուած է այժմ Ապտին, և Յուլիս 1է սկսեալ՝ կ'ընդունի միայն գիշերօթիկ աշակերտներ, 13 տարին լրացուցած և գէթ նախնական կրթութիւնն ստացած ։

Կ'աւանդուի հայերէն, ֆրանսերէն, և անգլիերէն. նաև, առեւտրական աշխարհագրութիւն ու տօմարակալութիւն, գործնական մէթոտով ։

Ընդունելութեան պայմաններուն և ուրիշ մանրամասնութեանց տեղեկանալու համար գիմել կրթարանի Տեսչութեան, ՆՈՐ ՕՐ ի խմբագրատունը, Պազար Մուրուրի մէջ, թիւ 38 գրասենեակը, ուր Տնօրէնը կը գտնուի, բայց ի կիրաւի է, ամեն օր կէս օրէ ետքը ժամը 3էն մինչև 6 ։

Le gérant, J. MUNIER.

ԿՈՒԶԷ՛Ք ՈՒՆԵՆԱԼ, ՈՍՄԿԻ

ԿՈՒԶԷՆ ԼԱՐԻՈՂ, ԽԻՍՏ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ

ԺՄԱՑՈՅՑ ՍԸ

ՄԻՄԻՍՅՆ 120 ԴՐԵ. ՎՃԱՐԵԼՈՎ

ԴԻՄԵՑԷ՛Ք

ՄԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԳԱՀԻՐԷ ՄՈՒՍԻՓԻ ՓՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաև ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյցներու ամենապարզամասէլի գներէն սկսելով մինչև ազամանդազարդ ։ Արժաթ ժամացոյցներ 50 զրուշէն սկսեալ նիթէլ սրմօնթուա ժամացոյցներ 22 զրուշէն սկսեալ. նաև Ոսկի, արծաթ եւ ոսկեպատ շրջթաներ եւ գոհարեղէններ, ինչպէս նաև պատի եւ քոնալի բազմազան բանտիւններ ։

Ամերիկեան նիթէլ ժամացոյցներ, զրասեղանի յատուկ, 10 Դրուշի անհաւատալի գնոյ փոխարէն, որոնք լաւ կ'ըմանին ։

Ուրեմն գիմեցէ՛ք ուղղակի ։

ՄԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԱՏԱՆԱԲՈՅԺ Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գահիէ տը լա Պարսի կիւյ, Բ. յարկ, թիւ 9 գասիկոնը կը բժշկէ բերնի և ակուայի ամեն տեսակ հիւանդութիւնները ։ Այգրասները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9 ։

ՉՈՒԼԻՉ - ՄԵՔԵՆԱԳՈՐԾ

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐՔ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ ՆԱԿԻՆ ՏՊԱՐԱՆԸ

Շարա Մուհամմէտ Ալի, Հապպաքիյի

Կը ձուլեն, կը շինեն երկաթէ ու արդրէ զանազան գործիներ ոսկերչութեան և ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծորակ, կըն, Յաճախորդները զոհարանոց պայմաններով ։

ԱՌԱՌԱՏԱՐ (ԷՍԱՆԵՔԻ)

ԱՍՏԻԿ ԷՍՄԷՐԵԱՆ

ՇԱՐԷ՛Ս ՄՕԶԱՄՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ ԷԼ ԽԱԿԻ, ԳԱՀԻՐԷ

և Պոլսոյ մուսուլմանախոս խանութի իսկ Թիւ 81

Կը յայտարարէ արգոյ հասարակութեան թէ՛ Կ. Պոլսոյ Պաղէ Գարու, Թաշխանի թիւ 26 վաճառատունը ընակող և երկար ժամանակէ ի վեր իր փորձառութեամբ և ուղղամտութեամբ բոլոր պատուաւոր յաճախորդաց փոտահութիւնը զրաւօլ եմանէքնի Արբահամ էֆ. Պայթայեանի հետ ընկերակցութիւն մը կազմած է ։ Այսուհետեւ Կ. Պոլսէն Եգիպտոս և Եգիպտոսէն Կ. Պոլսի զրկուելիք ամեն տեսակ աւանդներ անկորուստ ու ապահով պիտի յանձնուին սահմանեալ տեղերին ։

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 29 ՅՈՒԼԻՍ 1900

3929	2924	2359	422	2748	373
294	384	597	4476	4769	2954
3076	4142	4894	4864	5484	5198
5944	6135	6456	6354	6758	7476
		8098	8208	9048	

Տպագրութիւն Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ — Պազար Մուրուր